ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին»։

Երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի շիրիմի վրա, մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության։

* *
*

Սեպտեմբերի 29-ին, կիրակի, «Տօն Վարագայ Ս. Խաչի»։

Մայր Տաճարում տոնի առթիվ պատարագեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, որը և քարոզեց Վարագա Ս. Խաչի տոնի ազգային-եկեղեցական նշանակության մասին ընդհանրապես և խաչի խորհրդի մասին մասնավորապես։

Ժամը 3-ին, Վեհարանի սեղանատանը, տրվեց ողջերթի ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի արտասահման կատարելիք ուղևորության առթիվ։

Ճաշկերույթին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հյուրաբար Մայր Աթոռում գտնվող հայտնի հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Թեյդին, նույն օրը Փարիզից Մայր Աթոռ ժամանած երաժշտագետ Արա Պարթևյանը իր տիկնոջ հետ և այլ հրավիրյալներ։

Ճաշկերույթին ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը և տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Ճաշկերույթի ժամանակ Վեհափառ Հայրապետին և նրա ուղևորության շքախմբի անդամներին բարի ճանապարհ մաղթեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը, հյուրերից պրոֆ. Ֆ. Թեյդին, երաժշտագետ Ա. Պարթևյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Վեհափառ Հայրապետը, խոսք առնելով, շնորհակալություն հայտնեց արտահայտված ջերմ և սրտագին բարեմաղթությունների համար և անդրադարձավ Իր երրորդ ուղևորության նպատակների և ծրագրերի մասին։

* *
*

Սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին Մայր Տաճար այցելեց Պակիստանի երգի և պարի պետական անսամբլը։

Վեհարանում հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը և զրույց ունեցավ նրանց հետ։

* *
*

Հոկտեմբերի 2-ին, չորեքշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Մոսկվա՝ արտասահման ուղևորվելու համար։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և Իր շքախմբի անդամներին

ՓՂՈՍԿՐՅԱ ԱՐԾԱԹՅԱ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀ,
ՆՎԵՐ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ։

բարի ճանապարհ մաղթեցին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Երևանի եկեղեցիների քահանայից դասը, պաշտոնական անձինք և այլ հյուրեր։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը և տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

* * *

Հոկտեմբերի 6-ին, կիրակի. Մայր Տաճարում իր վարդապետական անդրանիկ պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Իշման Ս. Սեղանի առաջ, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի գահակալության 8-րդ տարեդարձի բարեբաստիկ առթիվ։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով ամերիկահայ ուխտավորներ։

* * *

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ, «Տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց»։

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

* * *

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ, Միլանոյից Մայր Աթոռ ժամանեց հայտնի մտավորական դոկտ. Ա. Սրապյանը։

* * *

Հոկտեմբերի 13-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Որք զծորանս Հոգւոյն արբին և ընդ ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց» բնաբանով։